ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 112131045

20.07.20112 թ. Քաղաք Երևան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնառության պայմանագիրը (այսուհետ՝ ***Պայմանագիր***) կնքում են ՀՀ ԿԳՆ (այսուհետ՝ Նախարարություն) Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ***Կրթահամալիր***) ավագ դպրոց վարժարանը (այսուհետ՝ ***Դպրոց***), ի դեմս տնօրեն (այսուհետ՝ ***Տնօրեն***) Գևորգ Հակոբյանի, ով գործում է կանոնադրության համաձայն, 10-րդ դասարանի սովորող (այսուհետ՝ ***Սովորող***) ……ի օրինական ներկայացուցիչը՝ ……..ը (այսուհետ՝ ***Օրինական ներկայացուցիչ)***, որպես Սովորողի կրթության պատասխանատուներ (այսուհետ՝ ***Կողմեր***), Սովորողի կրթությունը Կրթահամալիրում և Դպրոցում կազմակերպելու համար։

Պայմանագիրը նախատեսված է Հանրակրթության մասին ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), Կրթահամալիրի զարգացման ծրագրով, ***Դպրոցի*** ուսումնական պլանով և կազմված է Նախարարի *26.12.2009թ. N 1105-Ն* հրամանով հաստատված օրինակելի պայմանագրի հիման վրա։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

1. Օրենքով սահմանված կարգով Կրթահամալիրում իրականացվում է «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր, մեդիակրթություն» պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագիր (այսուհետ՝ ***Ծրագիր***)***:*** Ծրագիրն ապահովում է կրթություն բոլորի համար, Օրենքով երաշխավորված՝ հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը Սովորողի զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին, ստեղծագործական աշխատանքի խթանման, Սովորողի վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը, հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը, հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:
2. Դպրոցը ***Կրթահամալիրի*** մասնաճյուղ է և իրականացնում է **ավագ** դպրոցի (10-12-րդ դասարանների) ծրագիր։
3. Դպրոցը պետական պատվերի շրջանակում իրականացնում է անվճար հանրակրթական ծառայություններ:
4. Դպրոցը Ծրագրի շրջանակում կազմակերպում է Սովորողի ուսումնական պլանով որոշված լրացուցիչ կրթական ծառայություններ (այսուհետ՝ լրացուցիչ ծառայություն).
   - ուսումնական կաբինետում, լաբորատորիայում, ընթերցարանում էլեկտրոնային գրատախտակի, տեսապրոեկտորի, էլեկտրոնային գրիչների և թվային այլ միջոցների կիրառում.
   - սովորողի ընտրությամբ դասընթացի և ակումբային գործունեության կազմակերպում 12-15 հոգիանոց խմբերով.
   - կրթահամալիրի թվային և ուսուցման այլ միջոցներից անարգել օգտվելու հնարավորություն.
   - սովորողի սպասարկում՝ որպես մեդիագրադարանի բաժանորդի. անլար համացանց.
   - ֆիզիկական կուլտուրայի կազմակերպում որպես սովորողի ընտրած մարզաձև.
   - սահմանված կարգով առաջադիմության մեդիաստուգում.
   - սահմանված կարգով ուսուցման առցանց կազմակերպում
   - ուսուցման մեջ կայքերի, բլոգների, էլեկտրոնային օրացույց-օրագրերի, էլեկտրոնային փոստերի գործածում.
   - սովորողի անհատական նոթբուքի, թվային այլ միջոցների երաշխավորված պահպանում դպրոցում գտնվելու ընթացքում.
   - սովորողի ուսումնական գործունեության մասին ամբողջական ամենօրյա տեղեկատվություն համացանցի միջոցով:

2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ուսուցումը կազմակերպվում է հանրակրթական պետական չափորոշչին ***(այսուհետ՝ Չափարոշիչ***) համապատասխան, Սովորողի՝ սահմանված կարգով հաստատվող տարեկան ուսումնական պլանի (Պայմանագրի հավելված 1) հիման վրա։
2. Սովորողի ընդունելությունը Դպրոց իրականացնում է Տնօրենը՝ Օրինական ներկայացուցչի բանավոր դիմումի և Պայմանագրի հիման վրա։ Օրինական ներկայացուցիչը Դպրոց է ներկայացնում Օրենքով սահմանված փաստաթղթեր, որոնց հիման վրա սահմանված կարգով լրացվում է «Սովորողի անձնական գործ» գրքույկը: Սովորողը ունի նաև սահմանված կարգով լրացվող էլեկտրոնային գործ:
3. Դպրոցի ուսումնական խմբերը (դասարանները) կազմավորվում են Ծրագրով սահմանված կարգով: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը ուսումնական պարապմունքն է։ Ուսումնական անընդհատ պարապմունքի տևողությունը 45 րոպե է։ Ուսումնական պարապմունքները կազմակերպվում են սահմանված կարգով, ըստ հաստատված դասացուցակի և ժամանակացույցի:
4. Ուսուցումը կազմակերպվում է Դպրոցում, Կրթահամալիրի այլ կրթական օբյեկտներում, սահմանված կարգով կազմված և հրապարակված ուսումնական օրացույցով նախատեսված ուսումնական, մարզա-առողջարարական, հայրենագիտական, էկոլոգիական ճամբարներում, ուսումնա-արտադրական, փորձարարական բազաներում, ՀՀ կազմակերպություններում:
5. Դասագրքերի շրջանառու հիմնադրամի դասագրքերը սահմանված կարգով տրամադրվում են նախարարության հաստատած վարձավճարներով: Սովորողը Կրթահամալիրի գրադարանի բաժանորդն է, սահմանված կարգով, որպես վճարովի կրթական ծառայություն, օգտվում է գրադարանի տպագիր և էլեկտրոնային ուսումնական միջոցներից, նյութերից:

6. Ընթացիկ, ամփոփիչ ստուգումներն իրականացվում են Ծրագրով նախատեսված ժամկետներում և սահմանված կարգով:
7. Սովորողը հանրակրթական առարկաներից տարեկան անբավարար գնահատականներ ունենալու դեպքում սահմանված կարգով ընդգրկվում է շտկողական պարապմունքներում, ստանում և կատարում ամառային առաջադրանքներ, բացառիկ դեպքում սահմանված կարգով կրկնում դասընթացը: Չառաջադիմող սովորողի Պայմանագիրը սահմանված կարգով լուծվում է ընթացիկ և կիսամյակային առաջադիմության արդյունքներով:
8. Սովորողը սահմանված կարգով ընդգրկվում է լրացուցիչ կրթության պարապմունքներում:
9. Ուսումնական պլանով որոշված պարապմունքներին Սովորողի մասնակցությունը պարտադիր է: Պարապմունքից բացակայությունը, դրա լրացումը կատարվում են սահմանված կարգով: Անհարգելի բացակայող Սովորողի Պայմանագիրը սահմանված կարգով լուծվում է: Սովորողի չհաճախելու համար Օրինական ներկայացուցիչը կրում է պատասխանատվություն:
10. Կանոնները չպահպանելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում օրենքով և սահմանված կարգով սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ ա) նկատողություն, բ) խիստ նկատողություն:
11. Դպրոցը կարող է միակողմանի, տասն օր առաջ տեղյակ պահելով Օրինական ներկայացուցչին, սահմանված կարգով լուծել Պայմանագիրը, եթե Սովորողը, Օրինական ներկայացուցիչը չեն պահպանել պայմանագրային դրույթները, կամ Սովորողը չի ապահովել կրթության բովանդակությանն ու ծավալի յուրացմանը ներկայացվող նվազագույն պահանջները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

1. Օրինական ներկայացուցիչը պարտավորվում է նշված լրացուցիչ ծառայությունների համար մեկ ուստարում վճարել 130 000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ: Առաջին մուծումը՝ 13 000 (տասներեք հազար) ՀՀ դրամը, կատարվում է պայմանագրի կնքման պահին:
2. Պայմանագրով որոշված վճարումները սահմանված կարգով անել փոխանցումով՝ կրթահամալիրի հաշվարկային հաշվին. կիսամյակային՝ սեպտեմբերին և հունվարին կամ ամսական՝ վճարելով 13 000 (տասներեք հազար) ՀՀ դրամ: Ամսական վճարման դեպքում վճարումը կատարել մինչև տրված ամսվա 5-ը:
3. Ոչ լրիվ ուսումնական տարվա դեպքում ստացած ծառայությունների վճարը հաշվարկվում է ամիսը 13 000 (տասներեք հազար) ՀՀ դրամ:
4. Ստացված ծառայությունների և վճարված գումարի անհամապատասխանության դեպքում կրթահամալիրը վերադարձնում է տարբերությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, օրենսդրությամբ, Կանոններով, Կանոնադրությամբ, Պայմանագրով:

1. Տնօրենը պարտավոր է՝
   1) մինչև Պայմանագրի կնքումը Սովորողին և Օրինական ներկայացուցչին ծանոթացնել առաջարկվող Պայմանագրին, կրթահամալիրի կանոնադրությանը, Կանոններին, Ծրագրին, Կարգերին (mskh.am).
   2) Սովորողի առողջության պահպանման և ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելու, վերականգնելու նպատակով տարին առնվազն մեկ անգամ սահմանված կարգով անցկացնել բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն. առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես հաճախել չկարողացող կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող Սովորողի համար սահմանված կարգով կազմակերպել հեռավար, առցանց կամ տնային ուսուցում.
   3) Դպրոցում ուսուցումը կազմակերպել Ծրագրի և Չափորոշչի պահանջներին համապատասխան՝ Սովորողի համար ապահովելով Ծրագրով և Չափորոշչով սահմանված գիտելիքների, կարողությունների, արժեքների ընդհանրական որակական մակարդակը.
   4) հարգանքով վերաբերվել Սովորողի իրավունքներին ու ազատություններին՝ միաժամանակ կարևորելով քաղաքացիական գիտակցության, հանրակրթության բնագավառում ժողովրդավարական սկզբունքների և կրթության աշխարհիկ բնույթի ապահովումը և կիրարկումը.
   5) ստեղծել Սովորողի առողջության, հիգիենայի, սննդի, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմաններ.
   6) ապահովել Սովորողի կյանքի անվտանգության պայմանները, միաժամանակ իրագործելով նրա շահերի դեմ ուղղված ոտնձգություններից պաշտպանելու իրավաչափ գործողություններ, ինչպես նաև թմրեցնող նյութերից, պայթուցիկ պարագաներից, մուրացկանությունից, թափառաշրջիկությունից, և այլ բնույթի քրեածին, հանցավոր արարքներից հետ պահող, կանխարգելող միջոցառումներ.
   7) սահմանված կարգով ապահովել սովորողների մասնակցությունը Դպրոցի կառավարմանը՝ առավելագույնս խթանելով ինքնուրույնությունը և անհատական պատասխանատվությունը:

   Տնօրենի իրավունքները որոշված են Կանոնադրությամբ, Կանոններով, Կարգերով:
2. Օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝
   1) ընտանիքում Սովորողին դաստիարակել և ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.
   2) Սովորողին ապահովել ուսումնառության համար անհրաժեշտ գրքերով, անհատական ուսումնական միջոցներով, տանը համացանցին միացված համակարգչով և Պայմանագրի հավելվածով նախատեսված այլ միջոցներով.

3) պաշտպանել Սովորողի իրավունքները, օրինական շահերը և առանց լիազորագրի հանդես գալ ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում.
4) ունենալ էլեկտրոնային հասցե և պատասխանել ուսուցչի, կազմակերպչի, Տնօրենի, գրասենյակի ղեկավարի, Կրթահամալիրի տնօրենի էլեկտրոնային նամակներին, հետևել կրթահամալիրի կայքին.
5) Տնօրենի, Կրթահամալիրի տնօրենի հրավերով ներկայանալ դպրոց.
6) ապահովել սովորողի ներկայությունը ուսումնական պարապմունքներին, ուսումնական ճամփորդություններին և ճամբարներին, ստուգատեսներին, հաշվետվություններին.
7) սահմանված կարգով ժամանակին տեղեկացնել սովորողի բացակայությունների մասին.
8) ծանոթանալ սովորողի ուսումնական գործունեության ամսական հաշվետվությանը և կարծիք ուղարկել Տնօրենին.
9) Սովորողի դաստիարակության եղանակները ընտրելիս բացառել քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը.
10) Սովորողի դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ընտանիքում լուծել փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով Սովորողի շահերից, օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվի առնելով նրա կարծիքը, ներկայացուցչական իրավունքները չիրականացնել Սովորողի շահերին հակառակ.
11) մշտապես հոգալ Սովորողի ֆիզիկական առողջության, հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ կրթական կարիքների բավարարման, հակումների և ընդունակությունների զարգացման համար.
12) հարգել Սովորողի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, մայրենի լեզվի, կրթության աշխարհիկ սկզբունքների, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ.
13) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների, հայրենիքի, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների, հոգատարություն շրջակա միջավայրի նկատմամբ.
14) դաստիարակել հարգանք Դպրոցի, մանկավարժական և տեխնիկական սպասարկման աշխատանքներ կատարող աշխատողների նկատմամբ.
15) սահմանված կարգով հատուցել իր, ինչպես նաև Սովորողի կողմից Կրթահամալիրին հասցված վնասը.
16) Սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ, թմրեցնող նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ պարագաներ, առարկաներ օգտագործելուց, ինչպես նաև իրագործել մուրացկանությունից, թափառաշրջիկությունից, մոլախաղերից և այլ բնույթի քրեածին, հանցավոր արարքներից հետ պահող գործողություններ.
17) Կանխարգելել անհարգելի բացակայությունները:

3. Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի.
1) համագործակցելու Դպրոցի, մանկավարժական և դաստիարակչական աշխատանքներ կատարող աշխատողների հետ՝ Սովորողի կրթությունը Ծրագրով իրականացնելու համար.
2) Սովորողի ուսուցման և դաստիարակության հարցերով դիմելու Կրթահամալիրի տնօրենին, խորհրդին, համապատասխան այլ մարմինների.
3) պաշտպանելու իր և Սովորողի օրինական շահերը Կրթահամալիրի խորհրդում, մասնաժողովում, Դպրոցի հավաքներում, քննարկումներում, խաղարկային դատարանում, համապատասխան այլ ատյաններում.
4) մասնակցելու Կրթահամալիրի, Դպրոցի կառավարման, Ծնողական ինքնավարության մարմինների, Կրթահամալիրում իրականացվող՝ մեծահասակների կրթության ծրագրերին, Կրթահամալիրի օրացույցով անցկացվող ստեղծագործական հավաքներին, ներքին գնահատման գործընթացներին, առցանց քննարկումներին.
5) ներդրումներ կատարելու Կրթահամալիրի զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքներում, այդ թվում՝ ուսումնա-հայրենագիտական աշխատանքներ, ուսումնական ճամփորդություններ, ստեղծագործական, հայրենագիտական, էկոլոգիական ճամբարներ, սովորողների տրանսպորտային փոխադրման կազմակերպում:

4. Սովորողը իրավունք ունի.
1) ուսումնական նպատակներով ազատորեն օգտվելու Կրթահամալիրի, Դպրոցի կաբինետներից, ուսուցման բոլոր միջոցներից, այդ թվում՝ համակարգիչներից, համացանցից և թվային այլ միջոցներից.
2) սահմանված կարգով կազմելու իր ուսումնական պլանը և սահմանված կարգով փոփոխություններ կատարելու դրանում.
3) սահմանված կարգով ստանալու առցանց ուսուցում.
4) ընտրելու իր մարզաձևը.
5) մասնակցելու կրթահամալիրում գործող ակումբների աշխատանքներին.
6) հարցեր ուղղելու դասավանդողներին, Տնօրենին, Կրթահամալիրի տնօրենին, խորհրդին, մասնաժողովին.
7) մասնակցելու առցանց քննարկումներին.
8) հայց ներկայացնելու Կրթահամալիրի խաղարկային դատարան:

5. Սովորողը պարտավոր է.
1) չխախտել Կանոնները, ուսումնառության ընթացքում հարգել այլոց իրավունքները.
2) չուշանալ ուսումնական պարապմունքներից և մասնակցել ուսումնական պլանով որոշված բոլոր պարապմունքներին.
3) սահմանված կարգով մասնակցել ուսումնական պլանով որոշված ճամբարներին, մեդիաօլիմպիադաներին, ստուգատեսներին, ծեսերին, տոներին.
4) սահմանված կարգով մասնակցել ուսումնական ճամփորդություններին, ուսումնա-հասարակական նախագծերի իրականացմանը, մասնագիտական փորձառությանը.
5) սահմանված կարգով կատարել ուսումնական հանձնարարությունները.
6) հետևել կայքին և սահմանված կարգով մասնակցել կայքի աշխատանքներին.
7) մասնակցել հիգիենիկ պահանջների պահպանմանը, ուսումնական տարածքի և գույքի խնամքին.

8) սահմանված ներկայացնել ուսումնական գործունեության ամսական, կիսամյակային, տարեկան հաշվետվությունները:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Պայմանագիրը լուծվում կամ գործողությունը դադարում է սահմանված կարգով.
1) Օրինական ներկայացուցչի և Սովորողի նախաձեռնությամբ.
2) Դպրոցի նախաձեռնությամբ.
3) եթե Դպրոցը լուծարվել կամ վերակազմակերպվել է.
4) եթե Սովորողի նկատմամբ օրինական ուժի մեջ է մտել դատարանի դատավճիռը.
5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև սովորողի 12-րդ դասարան փոխադրվելը:
2. Նոր ուսումնական տարվա համար կողմերը կարող են լրացուցիչ ծառայությունների վերաբերյալ Պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ առաջարկել, որոնք իրավական ուժ կստանան, եթե դրանք կատարվել են գրավոր և ստորագրվել Կողմերի կողմից: Կատարված փոփոխությունները կամ լրացումները համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս:
3. Կրթահամալիրի դպրոցից դպրոց տեղափոխվելիս, եթե կրթական աստիճանը չի փոխվում, Պայմանագիրը շարունակում է գործել: Կողմերի նախաձեռնությամբ անհրաժեշտ փոփոխությունները կատարվում են հավելվածով:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Կողմերի տարաձայնությունները լուծվում են Կանոններով սահմանված կարգով, փոխադարձ համաձայնությամբ:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:
2. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի օրինակը սահմանված կարգով Դպրոցում պահպանվում է հինգ տարի:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օրինական ներկայացուցիչ՝

Անձնագիր_____
Անուն
Ազգանուն
Ստորագրություն _____
Հասցե
Հեռախոս
Էլ.հասցե_____

Հանրակրթության իրականացնող՝

«Մխիթար Սեբաստացի» կթահամալիր
Ավագ դպրոց վարժարանի տնօրեն
Գևորգ Հակոբյան
Հասցե ՀԱ զանգված, Բաբաջանյան պ.25
Հեռախոս 740042, 077615140
Էլ.հասցե gevorg@mskh.am

Բանկային հաշվի համարը՝ ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ
Հայէկոնոմբանկ Մետաքս մասնաճյուղ հ/հ 163218137665

Սովորող՝ _____

Պայմանագիրը լուծվել է հետևյալ պատճառով _____

Օրինական ներկայացուցիչ՝ _____

Դպրոցի ղեկավար՝ _____

Սովորող՝ _____